ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **14/12/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Աշոտ Աղաջանյանը, Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Գևորգ Դավթյանը, Դավիթ Դավթյանը, Հայկ Հակոբյանը, Ջիվան Մարգարյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Արմինե Հարությունյանը, Դավիթ Հարությունյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Վարդան Խաչատրյանը, Նարեկ Հովսեփյանը, Արմեն Խաչատրյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստը ուղիղ հեռարձակվում էր:

Համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանը ներկայացրեց, որ նախորդ նիստում «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում գտնվող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական տարածքներ նպատակային նշանակության հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» հարցը հետաձգվեց և համաձայն ե՞ք հարցը ներառել այս նիստում:

Դրվեց քվեարկության

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման կարգը հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:
5. «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին:
6. «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 58-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում գտնվող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական տարածքներ նպատակային նշանակության հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 21-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2433478.1 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2509922.6 հազար դրամ» բառերով:

2. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 3235302.6 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 3311747.1 հազար դրամ» բառերով:
3. Որոշման 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դավիթ Այվազյանը զեկուցեց, որ ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. Ղուկասյանից ստացել ենք գրություն, որի հիման վրա առաջարկվում է Սառնակունք բնակավայրի կոյուղագծերի և սեպտիկ հորի կառուցման աշխատանքների, նախագծի, փորձաքննության, տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրերում փոփոխություն կատարելու համար 5403222 ՀՀ դրամ հատկացնել: Նաև մանրամասը ներկայացրեց մյուս փոփոխությունների վերաբերյալ: Որոշման նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի երկամուտներն ու ծախսերը կավելանա 75644500 ՀՀ դրամով:
Դրվեց քվեարկության

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղական տուրքերի գոտիավորումները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2024 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2024 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի:
6. Որոշման հավելված 1-ի և հավելված 3-ի 20-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի փետրվարի 7-ից (հիմք՝ 2023թ. հուլիսի 13-ին «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում կատարվող փոփոխությունները):
7. Որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դավիթ Այվազյանը զեկուցեց, որ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության վերաբերյալ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, որը ուժը կկորցնի 2024թ. փետրվարի 7-ից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները՝ համաձայն հավելված 4-ի:
5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սանիտարական մաքրման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:
6. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վ. Խաչատրյանը զեկուցեց, որ մաքուր և բարեկարգ համայնք ունենալու համար սահմանվել է աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման կարգը, որը հիմք են ընդունել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Ավագանու անդամ Ս. Վարդանյանը առաջարկեց տեսախցիկներ տեղադրել որոշ հատվածներում և հսկողություն սահմանել, որպեսզի աղբը չթափեն:

Վ. Խաչատրյանը պատասխանեց, որ աշխատանքներ են տարվում տվյալ ուղղությամբ:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վ. Խաչատրյանը զեկուցեց, որ համայնքում ունենք սպասարկող օբյեկտներ, խանութներ իրենց հարակից տարածքները բարեկարգ վիճակում չեն պահում և անհրաժեշտ է սահմանել կարգ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին
«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, 688-րդ հոդվածի առաջին մասով ու 689-րդ հոդվածով և նկատի ունենալով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության գրությունն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Սպանդարյան փողոց թիվ 82 հասցեում գտնվող «Սիսիանի համայնքի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին օգտագործման տրամադրված անշարժ գույքից առանձնացնել 98,88քմ չօգտագործվող մակերեսով գույքը՝ համաձայն հավելվածի և 5 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ Սիսիան համայնքում բարեգործական ճաշարանի գործունեությունը շարունակելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վ. Խաչատրյանը զեկուցեց, որ բարեգործական ճաշարանն է, պայմանագրի ժամկետը լրացել է,անհրաժեշտ է նորից 5 տարի ժամկետով տրամադրել:

Ավագանու անդամ Հ'. Առաքելյանը առաջարկեց նոր տարածք տրամադրել, որպեսզի մեր հերթագրված փոքրիկները հաճախեն մանկապարտեզ:

Որոշեցին տարածքը տրամադրել մինչև նոր տարածք կգտնեն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, 688-րդ հոդվածի առաջին մասով ու 689-րդ հոդվածով, նկատի ունենալով «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՀՓ/5159-2023 գրությունն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Ծղուկ բնակավայրի վարչական շենքից առանձնացնել 9,8քմ չօգտագործվող մակերեսով տարածք՝ համաձայն հավելվածի և 5 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ին՝ Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան բնակավայրերի փոստային կապի ծառայությունները կազմակերպելու, բնակչությանը պատշաճ կերպով սպասարկելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38.1-րդ հոդվածով.

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան հանայնքի Գորայք բնակավայրում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին» թիվ 58-Ա որոշումը:
2. Սույն որոշումը չեղյալ է ճանաչվում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման կարգը, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 6-ին տրված «Օգտակար հանածոների արդյունահանման» թիվ ՇԱԹ-29/676 թույլտվությունը և լեռնահատկացման NL 676 ակտն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը և «ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ-ի 06 հունիսի 2022 թվականի դիմումը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաքի բնակավայրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր կատեգորիայի՝ 1.98837հա հողամասը (վկ. 29112023-09-0069) առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թույլատվություն ունեցող իրավաբանական անձ՝ «ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ-ին՝ ընդերքօգտագործման նպատակով, 18 տարի 6 ամիս ժամկետով, տարեկան 1հա 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Երկար քննարկումից հետո որոշեցին վարձավճարը թողնել անփոփոխ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱՋՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____